ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» Հունվարի 2018թ. N 135

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 141-րդ կետով, 2018 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող հիմնանորոգման և կառուցման աշխատանքների ավարտի կապակցությամբ ընդունման-հանձման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Կ.Գրիգորյան)՝ ընդունող հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից: